ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

<<28>> դեկտեմբերի 2016 թվականի N 72

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում եմ Դեբետ համայնքի ավագանու 23-ը դեկտեմբերի 2016թ. կայացած նիստի թիվ 43-Ա և 44-Ն որոշումները և Դեբետ համայնքի 2017-2021թթ զարգացման հնգամյա ծրագիրը:

Առդիր՝ 3 էջ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 23 >> դեկտեմբերի 20 16 թվականի N 43–Ա

ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դեբետ համայնքի ավագանու 2016թ.-ի դեկտեմբերի 23-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Դեբետ համայնքի 2017 -2021 թվականների սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին:

	Կողմ /3/	Դեմ /0/	Ձեռնպահ/0/
Հավեն Խաչատրյան			
Հաիրա Հարությունյան			
Անդրանիկ Պապինյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Դեբետ համայնք, գ.Դեբետ, 6-80-55

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 23 >> դեկտեմբերի 20 16 թվականի N 44-Ա

ԴԵԲԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021թթ. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32/2 կետով Դեբետ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Դեբետ համայնքի 2017-2021թթ սոցիալ-տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը:

	Կողմ /3/	Դեմ /0/	Ձեռնպահ/0/
Հավեն Խաչատրյան			
Հաիրա Հարությունյան			
Հնդրանիկ Պապինյան			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՐԱՏ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԴԵԲԵՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատվել է՝համայնքիավագանու _**23-ը դեկտեմբերի 2016թ.** ____թիվ___**44**__որոշմամբ

ԴԵԲԵՏ 2017թ.

Բովանդակություն

1. Համայնքիղեկավարիողջույնիխոսք 3
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 3
   2.1. Համայնքիընդհանուրնկարագրություն 3
   2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 5
   2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 6
   2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 7
   2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 7
   2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն 10
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 10
   3.1. Համայնքի զարգացման տեսլական 10
   3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 11
4. ՀԶԾ ֆինանսավորում 17
5. ՀԶԾ մոնիթորինգ 17

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Հարգելի համագյուղացիներ

Ձեզ եմ ներկայացնում Դեբետ համայնքի զարգացման ծրագիրը:Համայնքի զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Դեբետ համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի ընդունման նպատակն է սահմանել համայնքի տեսլականը 2021 թվականին,այդ տեսլականին հասնելու ռազմավարությունը և հիմնական նպատակները: Համայնքի զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել համայնքի առկա ռեսուրսները (ակտիվները), պարտավորությունները, տեղական առանձնահատկությունները, երկրի տնտեսական և քաղաքական առկա իրավիճակը, ինչպես նաև առաջիկա զարգացումների կանխատեսումները: Զարգացման ռազմավարության և գերակայությունների սահմանման ժամանակ ցուցաբերվել է ինտեգրացված մոտեցում (տնտեսական, սոցիալական, շրջակա միջավայրի և այլ գործոններ):

Համայնքի զարգացման ծրագիրն իր մեջ ներառում է՝ համայնքի իրավիճակի բնութագիրը, վերլուծությունը և գնահատումը, համայնքի տեսլականը, ռազմավարության և ՀԶԾ-ի հիմնական նպատակների սահմանումը, նախատեսվող հանրապետական և մարզային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերը, ֆինանսական իրավիճակի վելուծությունը, գնահատումը և կանխատեսումը, ոլորտային ծրագրերը, գույքի կառավարման ծրագիրը, զարգացման ծրագրի մոնիթորինգը:

Համայնքի հիմնական պրոբլեմներն են՝Համայնքի բնակչության մի մասը գտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

Ծրագրի մշակմանը մասնակցել են համայնքապետարանի աշխատակազմի բոլոր ստորաբաժանումները և համայնքի ավագանին, քննարկվել ու հաշվի են առնվել հանրային լսումների արդյունքում կատարված բոլոր առաջարկությունները:Ծրագիրը հաստատվել է համայնքի ավագանու անդամների կողմից:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Դեբետ համայնքը գտնվում է Լոռու մարզի արևելյան տարածքում, Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղուց դեպի արևելք 3կմ հեռավորության վրա: Սահմանակից է Դսեղ, Եղեգնուտ և Չկալով համայնքներին:Հեռավորությունը ՀՀ պետական սահմանից կազմում է 80 կմ, մայրաքաղաք Երևանից 150կմ, մարզկենտրոն Վանաձորից 30կմ: Համայնքի տարածքով հոսում է Հանքաձոր գետը, Ղարասու և Չկնաջուր գետակները: Կլիման բարեխառն է, ձմռանը՝ մեղմ, ամռանը՝ զով: Առանձին տարիների նկատվում է

կիզիչ շոգեր՝ երաշտ իր վնասակար ազդեցություններով: Լինում են կարկտահարություններ: Ձմռանը ճանապարհները չեն փակվում, սակայն առատ տեղումների ժամանակ առաջանում են անանցանելիություններ որոշակի հատվածներում:

Գյուղը շրջապատված է լեռներով և անտառներով: Գյուղի վարչական տարածքը կազմում է 10.32 քառ.կմ , որից վարելահողեր 57.15 հա, խոտհարք 150.6 հա, տնամերձ հողեր 150.6 հա, արոտավայրը 165 հա և այլն:

Դեբետ գյուղը հիմնադրվել է 1857 թվականին: Խորհրդային տարիներին կազմավորվել է կոլտնտեսություն, այնուհետև 1964 թվականից սովխոզ, որը լուծարվել է 1991 թվականին:

Համայնքի բնակչության 70%-ըգտնվում են սոցիալապես վատ պայմաններում:

Համայնքի բնակչության առկա թիվը՝981,

այդ թվում՝

0-1տարեկան – 11

1-6տարեկան-64

6-17 տարեկան-108

17-25 տարեկան – 125

25-42տարեկան-314

42-62 տարեկան-214

63 և ավելի– 145

Բնակչության սոցիալական կազմը՝

այդթվում՝

թոշակառուներ –149

միակողմանի և երկկողմանի ծնողազուրկ երեխաներ – 7

հաշմանդամներ – 25

որից՝

0-5 տարեկան– 0

6-17 տարեկան -2

Աշխատանք ունեցողներ – 153

գործազուրկներ – 500

ընտանիքների (ծխերի) թիվը-345

2.2. Համայնքիսոցիալ տնտեսական իրավիճակը

- Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն կազմում է 19.306 մլն դրամ:
- Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը կազմում է 3.406 մլն դրամ(21.3%),
- Ստորև բերված են համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների եկամուտները՝

Ձեռնարկություններ	Քանակը	Եկամուտներ,հազ.
Ձկնաբուծարաններ	2	
Խանութներ	2	
Քարի վերամշակման արտադրամաս	2	

- Աղյուսակում բերված են համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները 2016թ.

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքատարածության չափը	Արտադրանքի քանակը
կարտոֆիլ	20հա	148
կաղամբ	1.3հա	1տ
բանջարեղեն	7.9հա	5տ
միս		30տ
բուրդ		650կգ
ձու		150հազ.հատ
մեղր		3տ

Անասունների տեսակը	Գլխաքանակը
Խոշոր եղջերավոր անասուններ	896
Այդ թվում կովեր	346
Մանր եղջերավոր անասուններ	225
խոզեր	273
թռչուններ	1523
մեղվաընտանիքներ	403

- Համայնքում գործում է միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 107 աշակերտ:

Դպրոցն ունի 32 աշխատող:

- Համայնքում գործում է մանկապարտեզ, ուր հաճախում են 26 երեխա և ունի 5 աշխատող:
- Համայնքում գործում է մեկ բուժ-ամբուլատորիա, որն սպասարկում է :

Բուժ-ամբուլատորիայում աշխատում են 1 աշխատող:

- Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված են 32 ընտանիքներ,

- Համայնքում գործազրկության մակարդակը կազմում է 27%, հաշվի առնելով գյուղատնտեսությամբ զբաղվողներին:
- Դեբետ համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձանները և նրանց նկարները բերված են ստորև՝
  Համայնքի կենտրոնով հոսում է Հանքաձոր գետը, համայնքի տարբեր վայրերում գտնվում են խաչքարեր, որոնց մեջ կա նաև հազվադեպ հանդիպող թևավոր խաչ:
  Համայնքում կա նաև Հայրենական Մեծ պատերազմի զոհերի հիշատակի համար կառուցված հուշարձան:

2.3. *Համայնքում իրականացվող* ծրագրերը

- Հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվում է լուծել հասարակական տրանսպորտի խնդիրը: Նախատեսված են միջհամայնքային համագործակցության նպատակային միջոցառումներ՝ սպորտային մրցումներ և վիկտորինաներ; Նախատեսված է նաև կազմակերպել աղբահանություն հարևան համայնքների հետ:
- Առաջիկա տարիներին նախատեսված է իրականացնել մոնիտորինգներ:
- Բարեգործական ՀԿ-ների կողմից առաջիկա տարիների համար նախատեսված է համայնքում իրականացնել գրանտային ծրագրեր:

Պետության կողմից իրականացվող միջոցառումները խթանում են համայնքի երեխաների կրթության զարգացմանը:

Միջհամայնքային ծրագրով Դեբետ, Եղեգնուտ և Չկալով համայնքների բնակիչների համար հասանելի կդառնա հասարակական տրանսպորտը: Գյուղացիների համար դյուրին կդառնա բուժ-սպասարկման հաստատություններին, սպառման շուկաներին և գլխավոր մայրուղուն հասնելը:Այն կնպաստի գյուղացիների ապրելակերպի բարելավմանը և առողջության պահպանմանը: Դեբետ, Եղեգնուտ և Չկալով համայնքների բնակիչների համար հասանելի կդառնա աղբահանությունը:

COAF միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերի պարագայում կմեծանա երեխաների ակտիվությունը, ճանաչողությունը և ապագայում նրանց մասնակցությունը համայնքային խնդիրների լուծմանը:

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

N	Եկամուտի տեսակը	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը եկամուտներ	19.306 մլն	20.18	21.28 մլն	22.18 մլն	23.08 մլն
Ա	Հարկային եկամուտներ	3.406 մլն	3.58 մլն	3.78	3.98 մլն	4.08 մլն
1	Հողի հարկ	1.5 մլն	1.5 մլն	1.5 մլն	1.5 մլն	1.5 մլն
2	Գույքահարկ	826 հազ	1 մլն	1.2 մլն	1.4 մլն	1.5 մլն
3	Եկամտահարկ					
4	Այլ հարկային եկամուտներ					
Բ	Տուրքեր					
1	Պետական տուրքեր					
2	Տեղական տուրքեր	64 հազ	64 հազ	64 հազ	64 հազ	64 հազ
Գ	Ոչ հարկային եկամուտներ					
1	Վարձավճարներ	440 հազ	440հազ	440 հազ	440 հազ	440 հազ
3	Տեղական վճարներ					
4	Այլ ոչ հարկային եկամուտներ					
Դ	Դոտացիա	15,9 մլն	16,6 մլն	17,5 մլն	18,2 մլն	19 մլն
Ե	Եկամուտներ կապիտալ գործառություններից					
Զ	Տարեսկզբի ազատ մնացորդ					

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Դեբետ համայնքի առջև ծառացած ընդհանուր հիմնական խնդիրներն են՝

1.Համայնքն ունի 107.41հա վարելահող, որոնք տեխնիկայի բացակայության պատճառով մնացել են անմշակ և օգտագործվում են որպես խոտհարք:

2. Նախադպրոցական կրթության կազմակերպման խոչընդոտներն են ոչ տիպային շենքը, գույքի բացակայությունը, ծնողական ներդրումների դժվարությունները:

3.Երիտասարդության ներգրավմամբ ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպման խոչընդոտող գործոններն են՝ մշակութային կյանքի պասիվությունը,.

4.Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությանը խոչընդոտող գործոններ են՝

.գործազրկությունը,

,.խմելու ջրի անորակությունը/մանրէազերծման, ֆիլտրման բացակայությունը/,

.խմելու ջրի անհավասարաչափ բաշխումը,

5.ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսմանը խոչընդոտող գործոններն են՝

.սպորտհրապարակ, մարզադահլիճ և մարզագույք չունենալը,

Համայնքի բնակավայրերի կառուցապատմանը, բարեկարգմանը և կանաչապատմանը, համայնքի աղբահանությանը և սանիտարական մաքրմանը, կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովմանը, ինչպես նաև համայնքայի նգերեզմանատների պահպանմանը և գործունեության ապահովմանը խոչընդոտող գործոններն են՝

.ջրմուղ-կոյուղուբացակայությունը,

.խմելու ջրագծի և ջրի ներքին ցանցի քայքայված վիճակը,

.միջոցների սղությունը,

.փողոցային լուսավորության բացակայությունը:

1) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպմանը, համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանմանը և շահագործմանը խոչընդոտող գործոններն են՝

.միջհամայնքային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների քայքայված վիճակը,

.հանրային տրանսպորտի անբավարար վիճակը,

.ճանապարհային նշանների բացակայությունը

2) Գյուղատնտեսության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.ոռոգման ցանցի բացակայությունը,

.որակյալ սերմի բացակայությունը,

.գյուղտեխնիկայի բացակայությունը:

3) Համայնքում շրջակա միջավայրի պահպանությանը խոչընդոտող գործոններն են՝

.հեղեղատարների բացակայությունը,

.աղբահեռացում չկազմակերպելը,

4) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Դեբետ համայնքում՝ զբոսաշրջության զարգացման խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի հեռավորորությունը մայրաքաղաքից,

.գովազդի բացակայությունը,

.տուրիստական գործակալությունների հետ կապ չունենալը,

,ներհամայնքային ճանապարհների անմխիթար վիճակը

5) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպմանը խոչընդոտող գործոններն են՝

.գործարար միջավայրի բացակայությունը,

.ձեռնարկությունների բացակայությունը,

.երիտասարդների միգրացիան,

6) Համայնքում ծնելիության և բազմազավակության խթանմանը խոչընդոտողգործոններն են՝

.երիտասարդների չամուսնանալը,

.երիտասարդ ընտանիքների սոցիալապես պաշտպանված չլինելը,

.պետության կողմից աջակցության պակասը, աղքատությունը,

7) Համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրեր իիրականացմանը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծմանը խոչընդոտող գործոններն են՝

.բնակչության իրազեկվածության պակասը,.բուժ-գործիքների պակասը,.նեղ մասնագիտությամբ բժիշկների համայնքներ չհաճախելը,.անվճար բուժ սպասարկման քիչ լինելը,.ջեռուցման բացակայությունը

8) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքում համապատասխան պայմաններ չունենալը,

9) Համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ լիաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով բարեգործության խթանմանը խոչընդոտող գործոններն են՝

.համայնքի երիտասարդների կամավորության պակասը,

.հանրային համախմբվածության և մասնակցության թույլ լինելը,

.տեղեկատվական տեխնոլոգիաներին չտիրապետելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ԾՆՈՂ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Գյուղացիները գտնվում են սոցիալապես վատ պայմաններում, քանի որ՝

ա/գյուղտեխնիկայի բացակայության պատճառով անմշակ են մնացել վարելահողերը,

բ/ նրանք բավարարված չեն ոռոգման ջրով, իսկ նրանց ապրուստի հիմնական միջոցն ստացվում է բանջարա-բոստանային մշակաբույսերից և անասնաբուծությունից

գ/ հնարավորություն չունեն որակյալ սերմեր և վառելանյութ ձեռքբերելու,

դ/ գյուղացին համայնքի պրոբլեմները իր սեփականը չի համարում,

ե/ գյուղացին չի կարողանում իրացնել իր արտադրանքը,

զ/ գյուղացին չի կարողանում կատարել իր հարկային պարտավորությունները

է/ Գործազրկության պատճառով երիտասարդները մեկնում են արտագնա աշխատանքների:Համայնքում առկա է զանազան հիվանդությունների վտանգ, քանի որ՝

ա/ խմելու ջրի մանրէազերծում և ֆիլտրում չի կատարվում,

բ/ ջուրը հավասարաչափ չի բաշխված, ուստի բնակչության մի մասը հաճախ զրկվում են ջրից,

գ/ կենցաղային աղբահեռացում չի կատարվում:

2.6. Համայնքիուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

Համայնքի ուժեղ կողմեր	*Համայնքի թույլ կողմեր*
.Բանիմաց աշխատուժի առկայություն .Միջնակարգ դպրոցի առկայություն. Բուժ-ամբուլատորիայի առկայություն .Հեռահաղորդակցության առկայություն .Գազաֆիկացման առկայություն .Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հնություններ և հիասքանչ բնություն .Ողղակի ընտրությամբ ղեկավար ընտրելու հնարավորություն COAF ընկերության կողմից կառուցվող Սմարթ կենտրոնի առկայություն	.գյուղտեխնիկայի բացակայություն .Խմելու ջրի ցանցի անմխիթար վիճակ .Հողաբաժնի քանակի քչություն .Սոցիալապես ծանր վիճակում գտնվող ընտանիքներ .Ֆինանսական ռեսուրսների բացակայություն .Ծնելիության նվազում .Արտագնա աշխատանքի մեկնողների թվի աճ .Թերզբաղվածության բարձր մակարդակ .Ներհամայնքային ճանապարհների անբարեկարգ վիճակ .Տրանսպորտային ցանցի բացակայություն .Աշխատատեղերի պակաս
Հնարավորություններ	*Սպառնալիքներ*
.Խմելու ջրի պաշարի առկայություն .Պետական և միջազգային ծրագրերի մեջ ընդգրկվածություն .Քարի արտադրամասերի առկայություն .միկրոհեկի առկայություն .Տուրիստական հետաքրքրություն ներկայացնող վայրեր	.Տարերային աղետների վտանգ .Գյուղ. մթերքների գների նվազում .Գյուղատնտեսական մթերքների արտահանման դժվարություն .Սպառման շուկաների դժվար հասանելիություն .Տրանսպորտային հանգույցների դժվար հասանելիություն .Խիստ կլիմա /ցրտահարություն/ .Արտագաղթ.

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Ունենալ զարգացած և հզոր համայնք, որտեղ առկա են ձեռնարկություններ,աշխատատեղերի բարձր մակարդակ, զարգացած տուրիզմ և մարդիկ ապրում են արժանապատիվ կյանքով:

- Համայնքի ուժեղ կողմերի և միկրո-հնարավորությունների վրա հիմնված վեր հանել համայնքի խնդիրները և խոչընդոտները հաղթահարելով՝ ապահովել կայուն, շարունակական զարգացում ու հզորացում:

- Հետևողականորեն բարեփոխումներ կատարելու միջոցով բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել զարգացած, գեղեցիկ և բարեկարգ:
- Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.
- Գյուղացիներին ապահովել մաքուր խմելու ջրով,
- Զարգացնել բուսաբուծությունն ու անասնաբուծությունը
- Ակտիվացնել բնակչության մշակութային կյանքը,
- Կազմակերպել համայնքաբնակների հանգիստը
- Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը:
- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թիվը նվազեցնել 10%-ով,
- Համայնքի սեփական տարեկան եկամուտները հասցնել 20%-ով աճի,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի աճը նախորդ տարվա համեմատ հասցնել 3%-ով աճի:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

1) Գործարար միջավայրը բարելավել և ձեռնարկատիրությունը խթանել:
2) Համայնքի գույքը կառավարել:
3) նախադպրոցական կրթությունը և արտադպրոցական դաստիարակությունը կազմակերպել:
4) Ակտիվ մշակութային և մարզական կյանքն ակտիվացնել՝ երիտասարդության ներգրավմամբ:
5) Բարելավել համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը:
6) Ապահովել ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսումը:
7) Համայնքում բնակարանային շինարարությունը խթանել:
8) Ապահովել համայնքի բնակավայրերի կառուցապատումը,բարեկարգումը և կանաչապատումը: Կազմակերպել համայնքի աղբահանությունը և սանիտարական մաքրումը:Կոմունալ տնտեսության աշխատանքներն ապահովել, ինչպես նաև կազմակերպել համայնքային գերեզմանատների պահպանումը և գործունեության ապահովումը,
9) Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքը կազմակերպել,համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանումը և շահագործումը կազմակերպել:
10) Աջակցել պետության պաշտպանության իրականացման հարցում:
11) Իրականացնել աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումները:
12) Գյուղատնտեսության զարգացումը խթանել:
13) Կազմակերպել համայնքում շրջակա միջավայրի պահպանությունը:
14) Զբոսաշրջային հեռանկարներ ունեցող Դեբետ համայնքում զբոսաշրջության զարգացումը խթանել:

15) Համայնքի երիտասարդության խնդիրների լուծմանն ուղղված ծրագրերի և միջոցառումների կազմակերպումն ապահովել:
16) Համայնքում ծնելիությունը և բազմազավակությունը խթանել:
17) Ապահովել համայնքում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:
18) Համայնքային հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցությունը խթանել:
19) Համայնքում առկա ազգային և համամարդկային արժեքներին յուրաքանչյուրի ազատ հաղորդակցմանը նպաստել:
20) Բարեգործությունը խթանել՝ համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԾՐԱԳԻՐ 1

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ՎԵՐԱՆՈՐԱԳՈՒՄ և ՁՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Դեբետ համայնքում հասարակական տրանսպորտի աշխատանքի և համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանման և շահագործման նպատակով կիրականացվի«**Ճանապարհների բարեկարգում**»ծրագիրը:Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքի բնակիչներին բարեկարգ ճանապարհով և հասարակական տրանսպորտով ապահովումը:Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1.Կատարել միջհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.2. Կատարել ներհամայնքային ճանապարհների բարեկարգում:

1.3.Կատարել դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում:

1.4.Հեղեղատարներ կառուցել:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Դեբետ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, մրցույթ հայտարարել ճանապարհաշինարարական աշխատանքներ կատարող կազմակերպություն գտնելու նպատակով: Ստանալ համապատասխան գումարը, փոխանցել գումարն ընտրված կազմակերպությանը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:Այժմ համայնքի ճանապարհները գտնվում են քայքայված վիճակում, կահավորված չեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքում մեքենաները կերթևեկեն անվտանգ, գյուղացիները հեշտ կհասնեն բուժ-սպասարկման հաստատություններ, սպառման

շուկաներ, մայրուղի և գյուղացիների սոցիալ-տնտեսական վիճակը կբարելավվի:Ծրագրի բյուջեն կազմում է՝
Ընթացիկ ծախսեր՝2մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝12մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 14մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Նկարագիրը – ներհամայնքային փողոցների բանուկ խաչմերուկ տարածքներում տեղադրված են մոտ 10 հատ փողոցային լուսավորության կետեր, որը սակայն բավարար չէ գիշերային լուսավորության ապահովման համար և բյուջեի սղության պատճառով չեն գործում:Երեկոյան և գիշերային մթության մեջ ներհամայնքային ճանապարհներով անցուդարձը դարձել է անապահով և դժվարին:

Նպատակը – ներհամայնքային ճանապարհների որոշակի հարվածներում ևս 20 փողոցային լուսավորության կետեր տեղադրելով կբարելավվի փողոցային լուսավորության վիճակը համայնքում, ինչպես նաև օգտագործել էլեկտրաէներգիա խնայող լուսարձակներ:

Խնդիր – ներհամայնքային փողոցների բանուկ մասերում տեղադրել փողոցային լուսավորության ևս 20 կետեր:Գտնել բարերարներ ովքեր կոգնեն լուսավորության ծաղսը հոգալու համար:

Արդյունքը – կբարելավվի տրանսպերտի և հետիոտնի երթևեկության վիճակը համայնքում: Շահառուներն են համայնքի ողջ բնակչությունը:

ԾՐԱԳԻՐ 3

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՁՐԱՏԱՐԻ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Դեբետ համայնքում կոմունալ տնտեսության աշխատանքները կազմակերպելո ւնպատակով կիրականացվի«**Որակյալ խմելու ջրով ապահովում և ջրմուղ-կոյուղու կառուցում**» ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակներին բավարար քանակի մանրէազերծված ջրով և կոյուղով ապահովումը:Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝
1.Վերանորոգված խմելու ջրի գործող ջրագիծ և կանոնակարգված ջրի բաշխում

2.Կառուցված ջրմուղ-կոյուղի
Ծրագրի հիմնական գործողություններն են՝
1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
1.1. Ձեռք բերել խողովակներ էլեկտրոդ և փականով բաժանարարներ գործող ջրագծի վնասված խողովակները փոխարինել նորով:
1.3.Տեղադրել փականով բաժանարարները՝ բաշխումը կատարելով հավասարաչափ:
1.4.. Պարբերաբար կատարել խմելու ջրի մանրէազերծում սանէպիդկենտրոնի օգնությամբ:
2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.
2.1. Ձեռք բերելազբոխողովակներ, ջրհորի մետաղյա կափարիչներ, ցեմենտ և փականներ ջրմուղ կոյուղուհամար:
2.2. Խողովակները միացնել:
2.3. Համայնքաբնակներին աջակցել, որպեսզի բնակարաններից միացումներ տան դեպի կոյուղագիծ:
2.4 Կազմակերպել աղբահանություն:
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, մեխանիզացիա, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Դեբետ համայնքի բոլոր 1802 բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2017թ., ավարտվում՝ 2021թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ: Ներկայումս համայնքում ջուրը հավասարաչափ չի բաշխված, ջրի քանակը չի բավարարում բոլորին և ջուրը չի ֆիլտրվում ու չի մանրէազերծվում, բնակչության 15%-ը ջուր չունեն: Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր բնակիչները կապահովվեն բավարար քանակի մաքուր ջրով: Համայնքը չունի ջրմուղ-կոյուղի և շահառուներն օգտվում են դրսի սան-հանգույցներից: Ծրագրի իրականացմամբ համայնքի բոլոր շահառուները կօգտվեն ջրմուղ կոյուղուց: Համայնքում առկա զանազան հիվանդությունների վտանգը կվերանա, կոմունալ տնտեսությունըկզարգանա:
Ծրագրի բյուջեն կազմում է՝
Ընթացիկ ծախսեր՝ 7մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 17մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Նկարագիրը – համայնքը չունի ոչ մի միավոր գյուղատնտեսական տեխնիկա և գյուղագործիքներ: Վառելանյութերի գները բարձր են և ազգաբնակչությունը ի վիճակի չէ հարևան այլ համայնքներից գյուղտեխնիկա բերել և կատարել վարուցանքի աշխատանքներ: Դրա հետևանքով վարելահողերը վեր են ածվել խոտհարքների: Այս պահին գյուղատնտեսությունը և անասնապահությունը համայնքում կարելի է համարել քիչ եկամտաբեր:

Նպատակը – ձեռք բերել մեկ միավոր գյուղտոխնիկա իր մեխանիզմներով ու գյուղգործիքներով և գյուղացիներին տրամադրելով էժան ու երկարատև վարկեր, վարելահողերը ծառայեցնել իրենց նպատակին:

Խնդիր – ծրագիրն իրականացնելու համար կպահանջվի մոտ 4 մլն դրամ, որի մի մասը՝ կարող է ներդնել համայնքը:

Արդյունքը – ծրագիրն իրականացնելուց հետո համայնքում կզարգանա գյուղատնտեսությունը, որը կնպաստի նաև աշխատատեղերի ստեղծմանը, կբարելավվի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակին:

ԾՐԱԳԻՐ 5

ՄԱՐԶԱԴԱՀԼԻՃԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Դեբետ համայնքում ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի զարգացման նպատակով կիրականացվի«**Մարզադահլիճի կահավորում և գործարկում** » ծրագիրը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների մարզական կյանքի ակտիվացման ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝

1.Կահավորված և ջեռուցվող մարզադահլիճ

2. Մարզագույքով ապահովված մարզադահլիճ

Ծրագրի հիմնական գործողություններն են՝

1-ին միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

1.1. Ձեռք բերել արզադահլիճի կահավորման համար անհրաժեշտ գույք:

1.2. Կահավորել մարզադահլիճը:

1.3.Ձեռուցման համակարգը գործարկել:

2-րդ միջանկյալ արդյունքն ապահովող գործողություններ.

2.1. Ձեռք բերել տարբեր մարզաձևերի համար նախատեսված մարզագույք և տրինաժյորներ մարզադահլիճի համար:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Դեբետ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2018թ., ավարտվում՝ 2020թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն. Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային

ներդրումներ: Այժմ համայնքի մոտ 300 երիտասարդ և դպրոցական զուրկ է մարզվելու հնարավորությունից: Ծրագրի իրականացումից հետո համայնքի երիտասարդները կմասնակցեն մարզային, հանրապետական և միջազգային սպորտային մրցումներին և կզբաղվեն առողջ ապրելակերպով: Հետագայում համայնքը հնարավորություն կունենա մարզադպրոց հիմնելու, որտեղ կմարզվեն նաև հարևան 2 համայնքների 100 երիտասարդները:
Ծրագրի բյուջեն կազմում է՝
Ընթացիկ ծախսեր՝ 2մլն դրամ
Կապիտալ ծախսեր՝ 10մլն դրամ
Ընդհանուր բյուջեն՝ 12մլն դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՏԻՊԱՅԻՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Դեբետ համայնքում 2005թ գործում է <<Արևիկ>> մանկապարտեզը: Սկզբնական շրջանում սաների քանակը 13 էին, չնայած գյուղում կար ավելի շատ երեխա:
Մանկապարտեզ հաճախող երեխաների մտավոր ունակությունների բարձր մակարդակից ելնելով մանկապարտեզ հաճախել ցանկացող երեխաների թիվը ավելացավ և ներկայումս հաճախում է 25 երեխա, սակայն ցանկացողների թիվը հասնում է մոտ 40-ի:
Մանկապարտեզը գտնվում է << Ուսուցչի տուն>> կոչվող շենքի մի հատվածում, որի պայմանները չի համապատասխանում տիպային մանկապարտեզի ստանդարտներին:

Դրանից ելնելով, որ այժմյան մանկապարտեզի շենքում հնարավոր չէ ստեղծել տրպային մանկապարտեզ, համայնքում անհրաժեշտ է կառուցել մանկապարտեզ, որի համար համայնքԸ դիմել է տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների, բարեգործական հիմնարկների հայցելով նրանց աջակցությունը: Ծրագրի անմիջական նպատակն է՝ համայնքաբնակների մարզական կյանքի ակտիվացման ապահովումը: Ծրագրի միջանկյալ արդյունքներն են՝
1.Կահավորված և ջեռուցվող մարզադահլիճ
2. Մարզագույքով ապահովված մարզադահլիճ
Ծրագրի հիմնական գործողություններն են՝

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներից համայնքի կողմից ներդնել աշխատուժ, տրանսպորտ, սարքավորումներ և անհրաժեշտ գումարի 3%-ը: Ծրագրի հիմնական ռիսկերն են՝ դրամական միջոցների ձեռքբերումը: Ծրագրի հիմնական շահառուներն են Դեբետ համայնքի բոլոր բնակիչները: Ծրագիրն սկսվում է 2018թ., ավարտվում՝ 2020թ.:Ծրագրի համառոտ նկարագրություն.
Կատարել չափագրում: Կազմել պլանային նախագիծ և բյուջե: Գտնել դոնոր կազմակերպություն: Ներկայացնել գրանտային ծրագիր դոնոր կազմակերպությանը: Ծրագրի հավանության արժանանալուց հետո, ստանալ համապատասխան գումարը և կազմակերպել աշխատանքները: Կատարել համայնքային ներդրումներ:

Ծրագրի իրականացումից հետո համայնքի բոլոր ցանկացող երեխաները կարող են հաճախել մանկապարտեզ:
Ծրագրի բյուջեն կազմում է 10մլն դրամ:

4. ՀԶԾ ֆինանսավորում

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերը ֆինանսավորվելու են՝

- Համայնքի սեփական եկամուտներից,
- Ներքին պաշտոնական դրամաշնորհներից
- Արտաքին պաշտոնական դրամաշնորհներից,
- Բարեգործություն/նվիրատվություններից
- Այլ աղբյուրներից,

ՀԶԾ-ում ընդգրկված ծրագրերի իրականացման համար չկան առկա միջոցներ, նրանց համար անհրաժեշտ է գումար ապահովել:

5. ՀԶԾ մոնիթորինգ

ՀԶԾ մոնիթորինգը կիրականացվի համաձայն Մոնիթորինգի անձնագրով (Հավելված 3) սահմանված ցուցանիշների և ժամանակացույցի: